

Արթուր Ազարյան

Ծնվել է 1987 թվականի հունվարի 19-ին՝ Երևանում:

2003-2007թթ. սովորել է Երևանի Պետական Համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետում, 2007-2009թթ՝ նույն ֆակուլտետի մագիստրատուրայում՝ ստանալով մագիստրոսի որակավորում:

2014թ. դարձել է պատմական գիտությունների թեկնածու՝ պաշտպանելով «Հայկական հարց և Միոնիզմ» թեմայով ատենախոսությունը:

-----

2007-2011 թթ. զբաղեցրել է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի Արտոնագրման բաժնի պետի տեղակալի պաշտոնը:

2010-2018 թթ. զբաղեցրել է ՀՖՖ Տեխնիկական տնօրենի օգնականի պաշտոնը:

2011-2012 թթ. աշխատել է ՈւԵՖԱ-ի՝ Արտոնագրման և Ֆինանսական Արդար խաղի բաժնում՝ որպես մասնագետ:

2012-2017 թթ. զբաղեցրել է ՀՖՖ Արտոնագրման բաժնի պետի պաշտոնը:

2018 թվականի հունվարից մինչև հոկտեմբեր՝ ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար

2018 թվականի հոկտեմբերից մինչև 2020 թ. հունվար – ՀՖՖ Ֆուտբոլի դեպարտամենտի ղեկավար, Գլխավոր քարտուղարի տեղակալ

2013 թվականից ՈւԵՖԱ-ի պատվիրակ է: Որպես պատվիրակ՝ սպասարկել է ՈւԵՖԱ-ի հովանու ներքո անցկացվող մրցաշարերի ավելի քան 50 հանդիպում: